ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2008 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին**

1. Հրատարակվել է ակադեմիկոս Հ. Բարթիկյանի «Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի պատմություն հունաց և հայոց տարաձայնության» աշխատությունը, որում Ա. Պապադոպուլոս-Կերամևսի հունարեն բնագրով և զուգահեռ՝ հայերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով ընթերցողին ներկայացվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքի նստավայր Սրբոց Հակոբյանց վանքի և տարածաշրջանի ասորի, ղպտի և հաբեշ համայնքների ենթակայության շուրջ հայոց և հունաց միջև ծավալված՝ դարերի պատմություն ունեցող սուր վեճը: Հունարեն բնագրի հեղինակն է Պաղեստինի Կեսարիա քաղաքի մետրոպոլիտ Պարթենիոսը, որ այնուհետև՝ 1737-1766 թթ. զբաղեցրեց Երուսաղեմի հունաց պատրիարքի աթոռը: Ներկայումս աշխատությունը քաղաքական կարևորություն ունի՝ կապված Երուսաղեմում քրիստոնեական սրբությունների նկատմամբ Հայոց պատրիարքության ունեցած իրավունքների նկատմամբ հունաց ուղղափառ եկեղեցու ոտնձգությունների հետ:

Հրատարակվել է պ. գ. թ. Արտակ Մաղալյանի «Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.» աշխատությունը, որը նվիրված է հայոց պատմության կարևորագույն շրջափուլերից մեկի՝ Արցախի մելիքությունների պատմությանը: Աշխատության մեջ արխիվային նորահայտ նյութերի, վիմագրերի և պատմագիտական գրականության հիման վրա քննարկված են Արցախի մելիքների իրավասությունների և պարտականությունների հետ կապված հարցերը, ինչպես նաև ներկայացված է այնտեղ իշխող մելիքական տների տոհմաբանությունը: Գրքում ցույց է տրված հայոց իշխանության շարունակականությունն Արցախում՝ ընդհուպ մինչև այդ երկրամասի միավորումը Ռուսաստանին: Աշխատության հավելվածում զետեղված 50 փաստաթղթերը, որոնց մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ, նոր լույս են սփռում Արցախի մելիքությունների պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

Նշանակալի ձեռքբերում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյանի և պ. գ. դ. Վ. Ն. Ղազախեցյանի կազմած «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Դրանում խորհրդային երկրի պետական անվտանգության մարմինների (Արտակարգ հանձնաժողով, Պետական քաղաքական վարչություն, Միացյալ պետական քաղաքական վարչություն, Ներքգործժողկոմատ) 1922-1929 թթ. ամենամսյա տեսություններն են երկրում, այդ թվում նաև Հայաստանում տիրող քաղաքական դրության մասին: Դրանք բացառիկ աղբյուր են հանրապետության սոցիալ-քաղաքական, հասարակական հարաբերությունները, հասարակություն-պետություն առնչություններն ուսումնասիրելու համար: Փաստաթղթերն ու նյութերն ընտրված և քաղված են ««Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922-1934 гг.)» Մոսկվայում 2001-2004 թթ. հրատարակված հատորներից, որոնք ընդգրկում են 1922-1929 թթ.:

2. Կիրառական մշակումներ /չկան/

3. 2008 թ. ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող 3՝ բազային և 6՝ թեմատիկ թեմաների գծով կատարած զգալի աշխատանքները, հրատարակած մենագրություններն ու ժողովածուները, տասնյակ գիտական հոդվածները և հրապարակումները: Հաշվետու տարում ինստիտուտի գիտաշխատողները շարունակել են աշխատանքները «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի խմբագրման ուղղությամբ:

«Պետություն-եկեղեցի հարաբերությունները IV-IX դարերում» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Վ. Վարդանյան) շրջանակներում լույս է տեսել Վ. Վարդանյանի «Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անդարտության պահապաններ» հետաքրքիր աշխատությունը: Մենագրությունը նվիրված է միջնադարյան Հայոց պատմության մեջ ականավոր դեր խաղացած Պահլավունի տոհմի պատմությանը: Հեղինակը հայ և օտար սկզբնաղբյուրների հավաստի հենքի վրա քննության է առնում Պահլավունիների անցած ուղու պատմարժան իրողությունները, հատկապես Հայոց պետականության, Հայ առաքելական եկեղեցու դավանական անդարտության և անկախության գործին տոհմի ականավոր ներկայացուցիչների բերած նպաստը: Աշխատության մեջ լուսաբանվում է նաև Պահլավունի տոհմից սերած մտավորականների ծավալած ազգանվեր գործունեությունը, գրական և կրթա-լուսավորչական բնագավառներում նրանց ունեցած ներդրումը:

«Նոր Բայազետի գավառի սոցիալ-տնտեսական դրությունը 1820-1920 թթ.» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Վ. Ղազախեցյան) շրջանակներում լույս է տեսել պ. գ. դ. Համլետ Հարությունյանի «Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ.» աշխատությունը: Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ տրվում է Երևանի նահանգի ամենամեծ գավառի ամբողջական պատմությունը: Լուսաբանվում են Նոր Բայազետի գավառի վարչատարածքային կառուցվածքը, բնակչության ներգաղթը, էթնոդավանաբանական կազմի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական վիճակը, կրթամշակութային և հոգևոր կյանքը, ինչպես նաև այլ բնույթի հարցեր:

«Վանի նահանգապետության կազմակերպումն ու գործունեությունը» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Է. Կոստանդյան) շրջանակներում լույս է տեսել պ. գ. թ. Ռուբեն Սահակյանի «Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8 - հուլիսի 17)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում ներկայացված է 1915 թ մայիս-հուլիս ամիսներին Վանի նահանգապետության հայկական ոստիկանության կազմակերպումն ու գործունեությունը: Առաջին անգամ հրապարակվում են արխիվային փաստաթղթեր, որոնք ներկայացնում են քաղաքային և գավառական ոստիկանությունների ծառայությունը:

«Հայ զինվորականությունը 1914-2007 թթ.» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Կ. Հարությունյան) շրջանակներում լույս է տեսել Կ. Հարությունյանի «Հայ ռազմիկների մասնակցությունը

Խորհրդաֆիննական պատերազմին (30.11.1939 - 13.03.1940)» աշխատությունը: Արխիվային հարուստ փաստական նյութերի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մաս կազմող Խորհրդա-ֆիննական պատերազմին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել այդ պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, շքանշաններով և մեդալներով պարգևատրված հայ հրամանատարների ու զինվորների՝ հրետանավորների, օդաչուների, բժիշկների և տարբեր զորատեսակների կազմում մարտնչած հայորդիների կատարած սխրանքների վերհանմանը:

«Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Հանրապետության հայ ռազմական գործիչների կյանքն ու գործունեությունը 1914-1920 թթ.» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Վ. Ղազախեցյան) շրջանակներում լույս է տեսել պ. գ. դ. Մ. Կարապետյանի «Հայազգի զինվորականները ռուսական բանակում (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ)» աշխատությունը, որում Ռուսաստանի Դաշնության ռազմապատմական, Կրասնոդարի երկրամասի պետական և Հայաստանի ազգային արխիվների նորահայտ փաստաթղթերի, համապատասխան գրականության և նյութերի հիման վրա պատմագրության մեջ առաջին անգամ, ամբողջական ձևով, լուսաբանված են 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական բանակի մի շարք հայազգի զինվորականների՝ գեներալների և սպաների ռազմական կենսագրությունները, ռուսական զորքերի տարբեր զորատեսակների կազմում անցած մարտական ուղին և սխրանքները, վերջիններիս կատարած դերը հայկական ազգային զինուժի ստեղծման գործում: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական կազակային զորքերում ծառայած, մարտական բարձրագույն շքանշաններով և մեդալներով պարգևատրված հայազգի գեներալների, սպաների և զինվորների սխրանքների վերհանմանը:

«Խորհրդահայ պատմագրությունը XX դարի 20-30-ական թթ.» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Ս. Ստեփանյան) շրջանակներում լույս է տեսել Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի առաջատար գիտաշխատող Նորայր Սարուխանյանի «Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը» աշխատությունը: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գրքույկում ուսումնասիրության նյութ է դարձել հայազգի մեծ գիտնական Ալեքսեյ Ջիվելեգովի պատմագիտական և հասարակագիտական ժառանգությունը: Քննության է առնվել նաև Հայկական հարցի լուծման ուղղությամբ Ջիվելեգովի առաջադրած հարցադրումների ժամանակակագրական և միջազգային հարաբերությունների քաղաքական-դիվանագիտական հենքը:

«Սփյուռքի հայության կազմակերպման հիմնահարցերը» թեմայի (ղեկավար՝ պ. գ. դ. Է. Մելքոնյան) շրջանակներում Վ. Ղարախանյանը հրատարակել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956–2006 թթ.» մենագրությունը: Այն նվիրված է գրեթե չուսումնասիրված, արդիական և գիտագործնական նշանակություն ունեցող թեմայի՝

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ստեղծմանն ու անցած ավելի քան 50 տարվա ընթացքում ծավալած հայանպաստ բարեսիրական գործունեությանը: Գրքում մանրամասնորեն լուսաբանված ու արժևորված են Սփյուռքում և Հայաստանում նշված բարեգործական կազմակերպության իրականացրած կրթամշակութային օժանդակների շինարարության, կրթաթոշակների և դրամաշնորհների, հայկական հոգևոր, առողջապահական հաստատությունների աջակցության, մշակութային ձեռնարկումների և գիտության զար-գացման ծրագրերը: Ներկայացված է նաև աշխարհահռչակ նավթարդյունաբերող Գալուստ Սարգսի Կյուլպենկյանի կենսագրությունը:

Հրատարակվել է Աշոտ Մելքոնյանի «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» աշխատությունը: Մենագրությունն աստվածաշնչյան գագաթ Արարատ լեռան պատմաաշխարհագրական ուրվագիծն է: Հետազոտության մեջ քննության են առնված Արարատ-Մասիսի հետ կապված ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում տեղ գտած պատմական հետաքրքրական դրվագներ, աշխարհի տարբեր ծայրերից եկած ուխտավորների, ճանապարհորդների նոթերը՝ վաղ միջնադարից մինչև մեր օրերը: Աշխատության վերջին գլխում հեղինակը թղթին է հանձնել 2007 թ. օգոստոսի 8-10-ը մի խումբ հայորդիների հետ Արարատի գագաթը կատարած վերելքի տպավորությունները: Աշխատության մեջ զետեղված են նկարներ: Հեղինակն աշխատությանը կից պատրաստել է նաև մեկ ժամանոց ֆիլմ:

4. Ինստիտուտի կողմից 2008 թ. հրապարակումների ցանկը

*ա/ Մենագրություններ, աշխատություններ, ժողովածուներ, ձեռնարկներ*

1. Ակադեմիկոս Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 35:
2. Աբրահամյան Հ. Բ., Մարտ կրակագծի մատույցներում, Եր., «Ամարաս», 2008, 314 էջ:
3. Բարխուդարյան Վ. Բ., Պատմագիտության հարցեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 440 էջ:
4. Դանիելյան Է.Լ., Մելքոնյան Ա.Ա., Հայոց պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., Զանգակ - 97, 2008, 352 էջ:
5. Դանիելյան Էդ. Լ., Ճանաչիր հայրենիքդ, Եր., «Փրինտինֆո», 2008, 48 էջ:
6. Զաքարյան Լ. Ս., Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների ուսումնասիրություն, Եր., ՀՀ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2008, 81 էջ:
7. Խաչատրյան Վ., Հայոց հին պատմության հարցերի շուրջ, Եր., «Վան Արյան», 2008, 31 էջ:
8. Կարապետյան Մ., Հայազգի զինվորականները ռուսական բանակում /XIX դարի վերջ - XX դարի սկիզբ/ - Եր.: «Գիտություն» հրատ., 2008, 160 էջ + 4 էջ նկար:
9. Կոստանդյան Է. Ա., Գարեգին Սրվանձտյանց: /Կյանքը և գործունեությունը/, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 200 էջ:
10. Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), կազմողներ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյան, պ. գ. դ. Վ. Ն. Ղազախեցյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 351 էջ:
11. Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 303 էջ:
12. Հարությունյան Կ. Ա., Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին /30.11.1939 - 13.03.1940/», Եր., «Գիտություն» հրատ., 2008, 228 էջ
13. Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 294 էջ:
14. Ղազախեցյան Վլադիմիր, Գևորգյան Համլետ, Զանգեզուրի հերոսամարտը հրամաններում /1921 թ./: «Հայրենիք» մատ-շար, թ. 14: Եր., «Հայրենիք» Ակումբ, 2008, 111 էջ:
15. Ղարախանյան Վ. Մ., «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956 - 2006 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2008, 272+ 4 էջ ներդիր:
16. Մաղալյան Ա. Վ., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 327 էջ և 2 մամուլ ներդիր:

17. Մարուքյան Ա. Ց., Գալլաքյան Վ. Ե.,Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2008, 282 էջ:
18. Մելքոնյան Ա. Ա., Արարատ. Հայոց անմահության խորհուրդը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2008, 96 էջ:
19. Մուրադյան Հ. Ղ., Կուրսային և ավարտական աշխատանքների մեթոդական ցուցումների ու Հայոց Նոր պատմության (XVII դ. II կես-1918 թ.) թեմաների ձեռնարկ, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 103 էջ:
20. Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի պատմություն հունաց և հայոց տարաձայնության. Հունարեն բնագիրը Ա. Պապադոպուլոս-Կերամևսի, առաջաբանը, թարգմանությունն ու ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 187 էջ:
21. Սահակյան Ռ. Օ., Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում /1915 թ. մայիսի 8 - հուլիսի 17/, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 130 էջ:
22. Սարուխանյան Ն., Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 96 էջ:
23. Սիմոնյան Հ. Ռ., Կիլիկիահայերի զանգվածային կոտորածները (1909 թ. ապրիլ), Եր., ԵՊՀ հրատ., 2008, 380 էջ:
24. Վարդանյան Վ., Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2007, 234 էջ:
25. Տերոյան Վարազդատ. Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում. առաջաբանը, թարգմանությունն ու ծանոթագրությունները՝ Սահակյան Ռ. Օ., Եր., «Գիտություն» հրատ., 2008, 122 էջ:
26. **Арутюнян К. А., Маршал авиации С.А.Худяков - А.А.Ханферянц /2-е изд., испр. и доп./, Ер., "Зангак - 97", 2008, 252 с. + 36 с. илл.**
27. **Маргарян Е.,** Аршакаванская эллинистическая политея и Град Небесный Нерсеса Великого, Издательство РАУ**, 2007, с. 97.**

*բ/ Հոդվածներ*

1. Ազլյան Վ. Ռ., Բ.Օբամայի և Ջ.ՄակՔեյնի քաղաքական մոտեցումներն ու դիրքորոշումները Ռուսաստանի Դաշնության նկատմամբ, ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Բյուլետեն N 4, 2008, էջ 26-36:
2. Ալեքսանյան Հ. Ս., Սիմֆերոպոլի հայ համայնական խորհուրդն ու վարչությունը, Հայոց պատմության հարցեր, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ 192 – 206:
3. Ավագյան Ք. Ռ., ՊԱԿ-ի փաստաթղթերը Հայաստանում Կաթոլիկ Եկեղեցու բռնադատված հոգևորականների մասին (1928-1937 թթ.), «Մովսես Խորենացի». Երևանի Մովսես Խորենացու անվ. Համալսարանի գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, Երևան, թիվ 1-2, 2008, էջ 25-33:
4. Բարխուդարյան Վ. Բ., Ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, N 2, 2008, էջ 265-270:
5. Բարթիկյան Հ., 803 թ. բյուզանդական կայսր հռչակված Արևելից զորավար Վարդան Պատրիկը թու՞րք, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ 45-57:
6. Գինոսյան Ն., Հայ ճարտարապետները Օսմանյան կայսրությունում (XIX դարի կես-XX դարի սկիզբ), Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ 144-155:
7. Գինոսյան Ն., Հայ վաճառականները Օսմանյան կայսրությունում (19-րդ դարի երկրորդ կես- 20- րդ դարի սկիզբ), Orientalia, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի երիտասարդ դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, պրակ 7-8, Եր., 2008, էջ 124-138:
8. Գևորգյան Ջ. Հ., Պապական արգելքները և Կիլիկիայի հայկական պետության առևտուրը (1291-1344 թթ.), Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ 71-81:
9. Դանիելյան Էդ. Լ., Մովսես Խորենացու ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը, ՊԲՀ, Երևան, N 2, 2008, էջ 21-:
10. Դանիելյան Էդ. Լ., Հայկական տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը տեղեկատվական պատերազմի քարտեզագրական ոլորտում, «Գլոբուս», վերլուծական տեղեկագիր, Տեղեկատվական անվտանգություն, N 3, 2008:

11. Դանիելյան Էդ. Լ., Ստեփանոս Օրբելյանի պահպանած ավանդազրույցների պատմական նշանակությունը, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, h. 9, Եր., 2008, էջ 81-88:
12. Դանիելյան Էդ. Լ., Հայ ականավոր պատմաբան, «Լրաբեր» hաս. գիտ., N 1, 2008, էջ 2
13. Դումիկյան Ա. Վ., Կելտերի տարածման հարցը հնդեվրոպական «նախահայրենիքի» մասին վարկածների ոլորտում, «Մշակույթի և գրականության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր, 2008, էջ 7:
14. Զաքարյան Լ., Մամուլի անկախացման ճանապարհին, Հայոց պատմության հիմնահարցեր, N 9, Եր., 2008, էջ 269-279:
15. Թոխաթյան Կ., Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերները. Հայ ժողովրդի պատմություն, h. 1, ՀՀ ԳԱԱ hրատ., 8 էջ:
16. Թոխաթյան Կ., Երկնաքար Սևսարի ժայռերին.- Newmag (Նորհանդես), Եր., 2008, N 12, էջ 60-62:
17. Խառատյան Ա. Ա., Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին, Պատմաբանասիրական հանդես, N 2, 2008, էջ 112-121:
18. Խառատյան Ա. Ա., Արևմտահայ մամուլը 1918-1922 թթ., Լրաբեր hաս. գիտ., N 1, 2008, էջ 68-86:
19. Կարապետյան Ա., Մի դրվագ զինատար շարժման պատմությունից, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, h. 9, Եր., 2008, էջ 137-144:
20. Կիրակոսյան Գ. Լ., Արևելյան Հայաստանի դպրոցների և աշակերտների թվաքանակը 19-րդ դարի 80-90-ական թթ., ԼԲՀ, 2008, թիվ 2, էջ 37-45:
21. Կոստանդյան Է. Ա., Վազգեն Առաջինի «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» աշխատությունը, Էջմիածին, N 7, էջ --
22. Հակոբյան Ա., ՀՀ անկախության ուղին, ՊԲՀ, թիվ 1, 2008, էջ
23. Հակոբյան Ա., Հ. Հարությունյան «Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ.» ՊԲՀ, թիվ 2, 2008, էջ : Գրախոսություն:
24. Հայրապետյան Ա. Ս., Ժողովրդագրական գործընթացները Փամբակի գավառակում XIX դարի առաջին քառասնամյակին, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, h. 9, Եր., 2008, էջ 124-137:
25. Հարությունյան Կ. Ա., Ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Քրիստափորի Ագանով, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, 2008, էջ 264-268:
26. Հարությունյան Կ. Ա., Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը 1917-2000 թթ. գիրք Գ (1985-2000), Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, 2008, էջ 259-261, գրախոսություն:

27. Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության տեսակետը սոցիալիզմի, ազգայնականության և հայկական հարցի մասին (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ), Բանբեր Հայաստանի արխիվների, N 1, 2008, էջ 226-234:
28. Հովհաննիսյան Գ., Հայ ազգային կուսակցությունների միության խնդիրը 19-րդ դ. վերջին, 20-րդ դ. սկզբին, Երևանի Հայբուսակ համալսարանի գիտ. հոդվածների տեղեկատու, 2008, էջ 3:
29. Հովսեփյան Մ., Կ.Պոլսի «Շանթ» հանդեսը (1918-1919 թթ.), Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ 207-217:
30. Ղազախեցյան Վ. Ն., Հայրենադարձության կազմակերպման հարցի շուրջ, ԲՀԱ, № 1(111), 2008, էջ 127-136:
31. Ղարախանյան Վ. Մ., Ինչու՞ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը տեղակայվեց Պորտուգալիայում, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 9, Եր., էջ 232 – 244:
32. Մախմուրյան Գ. Գ., ԱՄՆ-ի օգնության կազմակերպումն ու Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, Եր., էջ 96-113:
33. Մաղալյան Ա. Վ., Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատությունը,«Բանբեր Մատենադարանի», N 18, 2008, էջ 283-305:
34. Մաղալյան Ա. Վ., Կուսապատի Աքաբեկյանների դատաստանա-կան գործը, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, 2008, էջ 3-27:
35. Մարգարյան Հ., **Новонайденные образцы античной скульптуры в Националной партийной галерее Армении**, ՊԲՀ, 2008, N 1, էջ 13:
36. Մարգարյան Ե., Կոմմազենեի հզոր մշակույթի պատմությունից /միհրականության հետքերով/, «Պատմություն և կրթություն» հանդես, թիվ 1-2, 2008:
37. Մելիքյան Կ., Բյուզանդիայի վարած եկեղեցական քաղաքականությունը Հայաստանում VII դարում, Հայոց պատմության հարցեր, N 9, 2008, էջ 37-44:
38. Մելիքյան Վ. Հ., Խաչատուր Կարճիկյան, Նշանավոր Ճեմարանականներ», Էջմիածին, հ. 2, 2008, էջ
39. Մելիքյան Վ. Հ., Աբրահամ Գյուլխանդանյան, Նշանավոր Ճեմարանականներ», Էջմիածին, հ. 2, 2008, էջ
40. Մելքոնյան Ա. Ա., Հայաստան աշխարհի անմահության խորհուրդը, Երևակ, թիվ 3, 2008, էջ 42-44:
41. Մելքոնյան Ա. Ա., Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության միտումները (16-19-րդ դ. սկիզբ), Հայկական պահանջատիրության հիմնահարցերը, Կիպրոսում 2008 թ. ապրիլի 19-21 անցկացված

միջազգային գիտաժողովի գիտական զեկուցումների ժողովածու, Մոսկվա, 2008, էջ 108-125:
42. Մուրադյան Ս., Սիրիայի հայկական բարեգործական ընդհանուր միության պատմությունը, Հայոց պատմության հարցեր, N 9, 2008, էջ 181-192:
43. Պողոսյան Վ., Արգար Յովհաննիսեան. պատմաբանի դիմանկարը (ծննդեան 100-ամեակի առիթով), Հանդէս ամսօրեայ, թիվ 1-12 2008 էջ 423-450
44. Պողոսյան Վ., Երկու խոսք // Մարգո Մխիթարյան, Նալբանդյանագիտության հարցեր, Երևան, 2008, էջ 3-4:
45. Պողոսյան Վ., Y. Ternon, լclats de voix. Recueil de textes 1974-2005, Paris, 2006 // Էջմիածին, 2008, թիվ Դ, էջ 94-104: *Գրախոսություն.*
*46.* Պողոսյան Վ., **Д.Ю. Бовыкин, Революция окончена? Итоги термидора, М., 2005 //** Annales historiques de la Rռvolution franջaise (Paris), 2008, N 352, pp. 291-294. Գրախոսություն.
47. Սարգսյան Ն., Մարդասիրական իրավունքի խախտման համար պատժամիջոցներն իբրև ցեղասպանության կանխարգելման միջոց, Օրենք և իրականություն, N 4, 2008, էջ 32-35:
48. Սահակյան Ա., Արաբկիրի սանջակի հայ բնակչության թվաքանակը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Հայոց պատմության հարցեր, N 9, 2008, էջ 155-168:
49. Սահակյան Ա., Ակն կալայի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին, ԼՀԳ, N 2, 2008, էջ 225-227 :
50. Սահակյան Ռ. Օ., Աշոտ Աբանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, ԲՀԱ, N 1-2, 2007, էջ 37-54:
51. Սահակյան Ռ. Օ., Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից, ԲՀԱ, N 1, 2008, էջ 44-61:
52. Սարգսյան Ս. Թ., Արտակ Դարբինյանի պատմագիտական հայացքները Արմենական կուսակցության պատմության մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2, էջ 37-46:
53. Սարգսյան Ս. Թ., Արմենակ Եկարյանը Արմենական կուսակցության պատմագիր, Էջմիածին, թիվ Ե, էջ 68-84:
54. Սարուխանյան Ն. Բ., Ստեփան Պալասանյանի պատմահրապարակախոսական ժառանգությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2008, № 1, էջ 85-97:
55. Սարուխանյան Ն. Բ., «Լեո», «ճեմարանի դասախոսները» գիրք – ժողովածու, Էջմիածին, 2008, 6 էջ:
56. Սարուխանյան Ն. Բ., «Ներսես Աշտարակեցի – պաշտպան հայրենյաց», «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, 6 էջ:
57. Սարուխանյան Ն. Բ., Աշոտ Հովհանիսյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ», «Էջմիածին» N 3-4, 5 էջ, գրախոսությունը:

58. Ստեփանյան Ս. Ս., Հայոց ցեղասպանությունը և մեր ժամանակը, «Դրոշակ», 2008, № 7, Երևան, էջ 18-22:
59. Սվազյան Հ., «Աղվանք» տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2, 2008, էջ 258-267:
60. Սուքիասյան Հ. Կ., Հայ-ադրբեջանական տարածքային խնդիրների լուսաբանումը Ռուբեն Տեր-Մինասյանի աշխատություններում, Բանբեր Երևանի համալսարանի, 2008թ., N 1, էջ 186-195:
61. Վարդանյան Վ., Սյունյաց ռազմիկները 482-484թթ. ժողովրդա-ազատագրական պատերազմում, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, N 9, 2008, էջ 12-22:
62. Վարդանյան Վ., Բագրատունի տոհմի ծագմանը և գործառույթներին առնչվող մի քանի հարցերի շուրջ, Պատմաբանասիրական հանդես, N 1, 2008, էջ 247-258:
63. Վարդանյան Վ., Պետություն և Եկեղեցի հարաբերությունները 450-451թթ. ժողովրդական պատերազմի հոլովույթում, Էջմիածին, N Ձ, էջ 2008:
64. Վարդումյան Գ. Դ., The Worship of Celestial Bodies among Armenians.– Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, N 9, էջ 8:
65. Վարդումյան Գ. Դ., Պաշտամունքը և հավատալիքները հելլենիստական դարաշրջանի Հայաստանում.– Հայ ժողովրդի պատմություն, h. 1, ՀՀ ԳԱԱ հրատ., 12 էջ:
66. Ուքուջյան Ա., Ալեքսանդր Ա Ջուղայեցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 12-14:
67. Ուքուջյան Ա., Ալեքսանդր Բ Բյուզանդացի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 14-15:
68. Ուքուջյան Ա., Աստվածատուր Ա Համադանցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 21-22:
69. Ուքուջյան Ա., Գրիգոր Ժ Ջալալբեկյան, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 65-66:
70. Ուքուջյան Ա., Գրիգոր ԺԲ Վաղարշապատցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ», հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 66-67:
71. Ուքուջյան Ա., Դանիել Ա Սուրմառեցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 68-69:
72. Ուքուջյան Ա., Դավիթ Ե Էնեջեքցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 72-74:
73. Ուքուջյան Ա., Եղիազար Ա Այնթափցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 78-80:
74. Ուքուջյան Ա., Կարապետ Բ Ուլնեցի «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 100-101:

75. Ուքուչյան Ա., Հակոբ Գ Սսեցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 119-120:
76. Ուքուչյան Ա., Միքայել Ա Սեբաստացի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 166-168:
77. Ուքուչյան Ա., Ստեփանոս Ե Սալմաստեցի, «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան, Էջմիածին, 2008, էջ 231-233:
78. Ուքուչյան Ա., Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյան, «Նշանավոր ճեմարանականներ», Էջմիածին, 2008, էջ 115-119:
79. Ուքուչյան Ա., Հակոբ Տեր-Հակոբյան, Նշանավոր ճեմարանականներ», Էջմիածին, 2008, էջ 477-483:
80. Ուքուչյան Ա., Սենեքերիմ Տեր- Հակոբյան, «Նշանավոր ճեմարանականներ», Էջմիածին, 2008, էջ 483-489:
81. **Авакян К. Р., Западник Мигран Свазлян о России,** «Լրաբեր հասարակական գիտությունների». Եր., թիվ 2 (622), 2008, էջ 248-257:
82. Вардумян Г. Д., Дохрисианский пантеон – Армяне (этнографический сборник), М., Институт этнологии РАН, 11 стр.
83. **Маргарян Е.,** Полисный принцип общественной организации. Некоторые особенности полис-ного общежития, Сборник научных статей. Годичная конференция, 2007, **с. 55-66.**
84. **Маргарян Е.,** Нахорарский строй как особенность армянского этнического идентитета, Сборник научных статей. Годичная конференция . Издательство РАУ, 2008.
85. **Марукян А., Правовые аспекты проявления геноцида армян на територии Азербайджана в 1988-1990 гг. на примере Сумгаита,** «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 9, Եր., էջ 279-288:
86. **Махмурян Г., Армянская дипломатия в июле-августе 1919 г. Парижское продолжение после Версальского договора**, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 9, Եր., էջ 218-231:
87. **Саруханян Н. Б.,** Знаменительный этап в истории Армении, «Вестник общественных наук», 2008, № 2, стр. 236-248.
88. Danielyan Ed. L., Cultural Basis of the Dialogue of Civilizations, International conference “Dialogue of Civilization” Internationa Centre for Christian Studies at the Orthodox Church of Georgia, Tbilisi, 2008, p. 6--:

**5. Տնօրեն՝** ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, պ.գ.դ. *Մելքոնյան Ա. Ա.*

**Գիտական գծով փոխտնօրեն՝** պ.գ.թ., դոցենտ *Խաչատրյան Կ. Հ.*

**Գիտական քարտուղար՝** պ.գ.թ. *Մուրադյան Հ. Ղ.*

e-mail՝ **history@sci.am**

6. Տվյալներ կադրերի վերաբերյալ՝

ա/ 1/-/

բ/ 1/1/

գ/ մինչև 35՝ 19 գիտաշխատող, 35-ից 60 և ավելի տարիքի գիտաշխատողների թվաքանակը՝ 64:

7. չկան

Աղյուսակ 1 /չկա/

*Արտոնագրային ցուցանիշներ*

| N | Կազմակերպություն ը | Արտոնագրերի հայտերի թիվը | Դրական որոշումների թիվը | Ստացված արտոնագրերի թիվը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |

Աղյուսակ 2

*2008 թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ*

| Կազմակերպու-թյունը | Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ. դր.) | | |
|---|---|---|---|
| | Բազային | Թեմատիկ | Տնտ. պայմանագրեր |
| 2 | 3 | 4 | 5 |
| ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ | 3 | 6 | - |

Աղյուսակ 3

*Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ*

| N | Միջոցառումները | Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները | Մասնակիցների թիվը | |
|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում արտ. երկրներից |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 2 | Հանրապետական գիտաժողով, նվիրված Սուրեն Տիգրանի Երեմյանի ծննդյան 100-ամյակին | ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի կլոր դահլիճ 10. 04. 2008թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակագիտական գիտությունների բաժանմունք | 110 | - |
| 3 | Հայրապետ Շատվորյանի «Թիֆլիսի հայ բարեգործական ընկերությունների պատմությունից» գրքի շնորհանդես | ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 11. 04. 2008թ. | 70 | - |
| 4 | Միջազգային գիտաժողով «Հայ-հունգարական հարաբերություններն ու հայերը Արևելյան և Միջին Եվրոպայում XVI-XX դդ.» թեմայով | ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ նիստերի դահլիճ 07. 07. 2008թ. | 95 | 10 |
| 5 | Արման Կիրակոսյանի «1894-1896 թթ. հայկական կոտորածներ. վկայություններ բրիտանական մամուլից» (անգլերեն) գրքի շնորհանդես | ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 21. 10. 2008թ. | 85 | 4 |
| 6 | Հանրապետական գիտաժողով նվիրված Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակին | ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 08. 12. 2008թ. | 80 | 5 |

Աղյուսակ 4

***ԳԱԱ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ -անդամ երկրներ, կատարած գործուղումները***

| N | Կազմակերպությունը | Երկիրը | Գործուղված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովների մասնակցելու համար | Համատեղ գիտական աշխատանքն կատարելու համար | Բանակցություններ և խորհրդածությունների համար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Պատմության ինստիտուտ | Սիրիա | 1 | | |
| | | Եգիպտոս | 1 | | |
| | | Կիպրոս | 2 | | |
| | | Անգլիա | 1 | | |
| | | Հունգարիա | 1 | 1 | |
| | | Ռուսաստան | 1 | 3 | 1 |
| | | Մոլդովա | | 3 | 3 |
| | | Ճապոնիա | 1 | | |
| | | Ֆրանսիա | 1 | | |
| | | Վրաստան | 2 | | |
| | | ԱՄՆ | 1 | | |
| | | Շվեյցարիա | 2 | | |
| | | Պարսկաստան | 1 | | |

Աղյուսակ 5

***Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ հիմնարկություններում***

| N | Կազմակերպությունը | Երկիրը | Ընդունված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գիտաժողովներին մասնակցելու համար | Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար | Բանակցություններ և խորհրդածությունների համար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Պատմության ինստիտուտ | Հունգարիա | 6 | | |
| | | Ռումինիա | 2 | | |
| | | Վրաստան | 4 | | |
| | | Հնդկաստան | | 1 | 1 |
| | | Սիրիա | | 1 | 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Պարսկաստան | | 2 | 2 |
| | | Լիբանան | | 1 | 1 |

Աղյուսակ 6 /չկան/

***ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգային դրամաշնորհներ***

| N | Կազմակերպությունը | Թեմայի անվանումը | Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը | Դրամաշնորհի ժամկետը | | Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., руб.) | | Թեմայի ղեկավարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սկիզբ | ավարտ | ընդհանուր | 2008 թ. համար | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | 8 |

Աղյուսակ 7

***Կազմակերպության 2006-2008 թթ. ֆինանսավորման ծավալները***

| N | Կազմակերպությունը | Բյուջե | | | Արտաբյուջե | | | Դրամաշնորհներ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | 2006թ. | | | 2007թ. | | | 2008թ. | | |
| | | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. | արտարժույթ ($, €, руб.) | արժույթի կուրսը | դրամ | արտարժույթ ($, €, руб.) | արժույթի կուրսը | դրամ | արտարժույթ ($, €, руб.) | արժույթի կուրսը | դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| | Պատմության ինստիտուտ | 77848.2 | 117376.9 | 124207.9 | 10730.1 | 1030.0 | 2710.0 | | | | | | | | | |

Աղյուսակ 8

***ԳԱԱ գիտաշխատողների 2008 թ. հրապարակումների ընդհանուր քանակը***

| N | Կազմակերպությունը | Մենագրություն, ժողովածու | | Ուսումնական ձեռնարկ, դասագիրք | | Հոդվածներ, զեկուցումներ | | Թեզիսներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրապետ. | Արտասահմ. | Հանրապետ. | Արտասահմ. | Հանրապետ. | Արտասահմ. | Հանրապետ. | Արտասահմ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | Պատմության | 25 | | 2 | | 84 | 4 | | |

| | ինստիտուտ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

Աղյուսակ 9

*Ասպիրանտների թվաքանակը*

| Կազմակերպությունը | Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2009 թ. | | Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք) | |
|---|---|---|---|---|
| | ա/կ. | ա/չկ. | ա/կ. | ա/չկ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Պատմության ինստիտուտ | 4 | 4 | 3 | - |

Աղյուսակ 10

*Տվյալներ մասնագիտացված գիտական խորհրդների վերաբերյալ*

| Կազմակերպու-թյունը | Առենա խոսու-թյան խորհրդի ծածկա-գիրը | Մասնագիտու-թյան ծածկագիրը և անվանումը | Խորհրդի նախագահի, գիտքարտուղար (գիտ.աստիճան, ազգանուն, անուն, հայրանուն) | 2008թ. ինստիտուտի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենա-խոսությունների թիվը | |
|---|---|---|---|---|---|
| | | | | դոկտորական | թեկնածուական |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Պատմության ինստիտուտ | 004 | է.00.01 /Հայոց պատմ-ն/ է.00.05 /Հայոց աղբյուրագիտություն և պատմագրություն/ | *Ա.Ա.Մելքոնյան* պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ.-անդ.<br><br>*Կ. Հ. Խաչատրյան* պ.գ.թ., դոցենտ | - | 1 |

Աղյուսակ 11

*ՀՀ ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ առ 01.01.2009 թ.*

| N | Կազմակեր-պությունը | Աշխատող-ների ընդհանուր թիվը | Գիտական աշխատող-ների ընդհանուր թիվը | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-ներ | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ-ներ | Գիտության դոկտորներ | Գիտության թեկնածուներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | Պատմության ինստիտուտ | 123 | 83 | 3 | 2 | 18 | 47 |

Ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա. Ա. Մելքոնյան

Отчет

об основных результатах научной и научно-организационной деятельности Института истории НАН РА за 2008 г.

1. Один из важнейших достижений института в 2008 году является труд Академика Р. Бартикяна "Парфения Афинского, митрополита Палестинской Кесарии, История спора ромеев с армянами". В книге на греческом оригинале А. Пападопулоса - Керамевса и параллельно с армянским переводом читателю представляется острый спор имеющий вековую историю, между армянами и греками по вопросу принадлежности резиденции иерусалимского армянского патриархата - монастыря св. Якова, а также ассирийских, абешских и коптийских общин. Автором греческого оригинала является митрополит палестинского города Кесария Парфений, который в дальнейшем в 1737-1766 гг. стал греческим патриархом Иерусалима. Ныне этот труд имеет политическое значение, связанное с посягательствами греческой Православной церкви на правами армян над Иерусалимские святыни.

Значительным результатом научной деятельности института за 2008 г. является также труд молодого историка, к.и.н. Артака Магаляна "Меликства и меликские дома Арцаха в XVII-XIX вв.". Монография посвящена важнейшей эпохе истории армянского народа-истории арцахских меликов. В книге на основе нововыявленных архивных материалов, литографов и историографической литературы представлены вопросы, касающиеся прав и обязанностей арцахских меликов, а также родословное меликских домов Арцаха. В книге показана беспрерывность армянского княжества в Арцахе вплоть до присоединения края к России. Размещенная в приложении 50 документов, большая часть которых публикуются впервые, проливают свет на ряд проблем истории арцахских меликов.

Главным результатом научной деятельности института за 2008 г. является также труд д.и.н. Гамлета Арутюняна "Ново-Баязетский уезд в 1828-1913 гг.". Впервые в армянской историографии представлена целостная история самого большого уезда Ереванской губернии. В книге освещены такие вопросы, как административное устройство Ново-Баязетского уезда, иммиграция населения, изменения этнорелигиозного состава населения, социально-экономическое положение, культурно-образовательная и духовная жизнь и другие вопросы.

Значимым достижением института за 2008 года является собрание документов и материалов «Армения в государственных секретных документах (1922-1929 гг.)» составленный докторами исторических наук Ашотом Мелконяном (член корреспондент НАН РА) и

Владимиром Газахецяном. В нем собраны ежемесячные обзоры 1922-1929 гг. государственных органов безопасности СССР (Ч.К., Государственное политическое управление, Соединенное государственное политическое управление, Народный комисариат внутренних дел) о политическом состоянии страны в том числе и Армении. Они являются исключительными источниками для изучения социально-политических отношений, общественных и отношений общество- государство республики. Документы и материалы выбраны из томов ««Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922-1934 гг.)» изданные в Москве в 2001-2004 гг., которые включают 1922-1929 года.

2. Прикладные разработки (нет)

3. Значимыми результатами научной деятельности института за 2008 г. являются работы, финансируемые из госбюджета - 3 базовых и 6 тематических тем, опубликованные монографии и сборники, десятки научных статей и публикаций. В отчетном году научные сотрудники института продолжили работы над редакцией нового академического многотомника "История Армении".

В рамках исследования той же темы был издан интересный труд д.и.н. Врежа Варданяна "Пахлавуни-хранители армянской государственности и духовной чистоты". Монография посвящена истории рода Пахлавуни, который сыграл большую роль в средневековой армянской истории. Автор на основе армянских и иностранных достоверных первоисточниках исследует вклад выдающихся представителей рода Пахлавуни в дело развития армянской государственности, чистоты и независимости Армянской апостольской церкви. В труде исследуется также патриотическая деятельность интелигенции из рода Пахлавуни и их вклад в литературной и образовательно-просветительской сферах.

Труд Эммы Костандян "Гарегин Срвандзтянц. Жизнь и деятельность" посвящен просветительской и публицистической деятельности писателя, ученого и педагога, выявившего эпос "Давид Сасунский", Гарегина Срвандзтянца, представлен его вклад в дело развития армянского фольклора и этнографии. Исследуется также общественная деятельность Срвандзтянца, связанная с национально-освободительными движениями.

В изданном Рубеном Саакяном сборнике документов и материалов "Организация и деятельность полиции в годы Ванского губернаторства (8 мая -17 июля 1915 г.)", представлен процесс организации и деятельность армянской полиции Ванского губернаторства с мая по июль 1915 г. Впервые публикуются архивные документы, представляющие службу городской и уездной полиции.

В рамках темы опубликован труд ведущего научного сотрудника института, д. и. н. Климента Арутюняна "Участие армянских воинов в советско-финской войне (30.11.1939-13. 03.1940 )". На основе богатых архивных материалов, соответствующей литературы и прессы впервые в армянской историографии освещается тема участия армянских воинов в советско-финской войне, которая является составной частью Второй мировой войны. Большое внимание

уделено освещению подвигов, которые совершили удостоенные звания героев Советского Союза и награжденные орденами и медалями армянские военноначальники и солдаты, артиллеристы, летчики, врачи.

В рамках темы опубликована книга Мурада Карапетяна "Военные-армяне в русской армии (конец XIX-начало XX вв.)". На основе нововыявленных соотвействующей литературы и материалов, документов военно-исторического архива РФ, Государственного архива Краснодарского края и Национального архива Армении, соответствующей литературы впервые в историографии освещены военные биографии армянских генералов и офицеров русской армии в конце 19-начале 20 вв., их пройденный боевой путь в разных частях русской армии и подвиги, а также их роль в деле создания национальной армии. Особое внимание уделено раскрытию подвигов, которые совершили награжденные орденами и медалями армянские генералы, офицеры и солдаты, служившие в рядах русских войск в годы Первой мировой войны.

Ведущий научный сотрудник Норайр Саруханян опубликовал книгу "Алексей Дживилегов как историк и Армянский вопрос". В этой книге исследуется историографическое и обществоведческое наследие крупного армянского ученого-Алексея Дживилегова. Здесь рассмотрена хронологическая и международная политико-дипломотическая основа постановок вопросов А. Дживелегова по решению Армянского вопроса.

Ваграм Караханян опубликовал монографию “Проармянская деятельность учреждения “Галуст Гюльбенкян” 1956-2006”. Книга посвящена почти не исследованной, актуальной и имеющей научно-практическое значение теме - созданию учреждения “Галуст Гюльбенкян” и ее благотворительной проармянской деятельности в течение прошлых более чем 50 лет. В книге подробно освящены и оценены благотворительные пожертвования, культурные начинания и планы развития науки осуществленные вышеупомянутой организацией в пользу культурно-образовательных, научных, духовных и здравоохранительных учреждений в армянской диаспоре и в Армении. В работе также представлена биография всемирно известного нефтяного магната Галуста Саркисовича Гюльбенкяна.

Ашот Мелконян опубликовал труд “Арарат: символ армянского бессмертия”. Монография историко-географический очерк библейской горы Арарат. В исследовании изучены интересные исторические эпизоды как из армянских, так и из иностраных источников, такие как записки паломников и путешественников из разных сторон мира от средневековья до наших дней. В последней главе автор изложил на бумаге впечатления группы армян после восхождения на Арарат с 8 по 10-го августа 2007 года. В труде были помещены также фотографии. Вместе с этим изданием автор также приготовил одночасовой фильм.

Директор института,
член-корр. НАН РА А.А. Мелконян

Statement about the Main Results of the Scientific and Scientific-organizational activities of the Institute of History of the National Academy of Sciences of Republic of Armenia in 2008

One of the significant results the Institute achieved in 2008 is the publication of “The history of the controversies between Greeks and Armenians writhen by Parthenios from Athens the Metropolitan of Caesarea of the Palestine” published by academician Hrach Bartikyan. The book contains an original text in Greek writhen by A. Papadopoulos-Keramevs enclosed with an Armenian preface, translation and notes writhen in Armenian by H. Bartikyan. It presents the centuries-old history of the sharp controversy between Armenians ang Greeks over the residence of Armenian patriarch of Jerusalem St. Jacob monastery and concerning the subjection of the Syrian, Coptic and Abyssinian communities of the region. The author of the Greek text is Parthenios, the Metropolitan of Caesarea of the Palestine, who then took the throne of the Greek patriarch of Jerusalem (1737–1766). At present the work is of political connected with the encroachments of the Greek Orthodox Church against the rights of Armenian patriarchate over the sacred Christian places in Jerusalem.

The book entitled “The Meliqdoms of Artsakh (Karabagh) and Meliq Houses in the 17-19$^{th}$ centuries” by a young historian Artak Maghalyan (Ph.D. of historical sciences) is also of significance in the research activities of the Institute in 2008. The monography enlightens one of the important periods of the history of Armenian people. It deals with the problems of Armenian rulers’ (meliqs’) dominions (meliqdoms) in Artsakh. The matters of rights and delegations of the mentioned rulers are discussed upon the broad basis of historical literature, as well as archival documents and lithographical materials that have been newly brought to light. The genealogy of the meliqhouses ruling in Artsakh is also presented. The monography comes to prove that the rule of Armenians in Artsakh continuously existed up to the time when their territories were annexed to Russia. The author has inserted 50 archival documents in the appendix of his work, and the greet part of them is published for the first time, thereby creating opportunities to represent some top priority issues of the history of Armenia and Armenian people in a new way.

The next research, which ranks among the significant results of the Institute is the work “The Region of Nor Bayazet in 1828-1913” by Doctor of historical sciences Hamlet Harutiunyan. The book intruduces with the whole history of the largest region of Yerevan province for the first time in Armenian historiography. Its author takes up questions of the administrative-territorial structure, population waves, ethno-religious changes, socio-economic conditions, cultural and spiritual life of Nor Bayazet.

The collection of materials and documents under the title of “Armenia in the Secret State Documents (1922-1929)” by Doctors of historical sciences Ashot Melkonyan (Correspondent Member of NAS of RA) and Vladimir Ghazakhetsyan is another valuable contribution to the achievements of the

Institute in 2008. It contains monthly reviews on the political situation in the USSR (including Armenia) state security bodies such as Extraordinary Commission, State Political Administration, United Political State Administration and National Committee of Home Affairs. The publication of such a collection is an exceptional source to study the socio-political situation and state and society relations in the former Soviet Armenia. The materials that date back to 1922-1929, are selected from the document collections having the title “Top Secret. Lyubyanka to Stalin: about the Situation in the Country”, which was published in Moscow in 2001-2004.

1. Applied workings-out /do not exist/

Director of the Institute of History, A. A. Melkonyan

Correspondent Member of NAS RA